ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ՄՋ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/1 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք.Երևան **06 սեպտեմբերի 2024թ.**
Ժամը՝ 12:00
10 սեպտեմբերի 2024թ
Ժամը՝ 12:15

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի «08» օգոստոսի 2024թ. թիվ 1414-Ա հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի Տ.Մեծի 18/5 և Հ.Նադարյան 3 հասցեներում գտնվող հողամասերում «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում» և «ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի Սայաթ Նովա 1-1 հասցեում գտնվող մանկական զբոսայգու, Ն.Ստեփանյանի 13 հասցեում գտնվող թիվ 3 մանկապարտեզի և Այգեստան 1/1 հասցեում գտնվող մարզադպրոցի տարածքներում գտնվող հողամասերում «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում», «ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Մանուկյան փ. 1-ին նրբ. թիվ 2 և 3, Թումանյան փ. թիվ 18, Շահումյան փ. թիվ 15 և 19 շենքերի բակերում գտնվող հողամասերում «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում» և «ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցին հարող քաղաքային պուրակում և Մաշտոցի փողոցի թիվ 2 և 3 բազմաբնակարան բնակելի շենքերի միջնամասում գտնվող հողամասերում «Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում» շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ **ՀՏՋՀ-ՄՋ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/1** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Էմանուել Իվանյան՝ Հանձնաժողովի նախագահ
Անահիտ Թադևոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան՝ Հանձնաժողովի բացող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

- ***Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին***

համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են, բացառությամբ.

- **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի,** որի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.3-ին կից չեն ներկայացվել նախկինում կատարած պայմանագրերի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ պայմանագրերի առնվազն 80%-ի կատարումը հավաստող փաստաթղթերը (հանձնման-ընդունման արձանագրություն, ակտ և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.
- Հավելված N 1.4-ին կից չեն ներկայացվել աշխատակազմի որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները, ինչպես նաև չեն ներկայացվել յուրաքանչյուր մասնագետի կողմից մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը՝ հաստատված հայտը ներկայացնողի կողմից համաձայն ձևաչափի (CV):
- Հայտում բացակայում են հրավերով պահաջված լիցենզիաները (Բնակելի, հասարակական և արտադրական, Էներգետիկ)
- **«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի,** որի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.3-ին կից չեն ներկայացվել նախկինում կատարած պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ պայմանագրերի առնվազն 80%-ի կատարումը հավաստող փաստաթղթերը (հանձնման-ընդունման արձանագրություն, ակտ և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.
- Հավելված N 1.4-ին կից չեն ներկայացվել առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին:
- Անհրաժեշտ է ներկայացնել «Միքնար» ՍՊԸ-ի գրանցման վկայականը՝ Հավելված N 1.4-ի խմբի ղեկավարի CV ձևաչափով ներկայացված տվյալների իսկությունը հավաստելու նպատակով:

2 Հանձնաժողովը որոշեց.

2.1 Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

2.2 Ծանուցել **մասնակիցներին** շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մինչև նիստի կասեցման վերջնաժամկետը՝ **09 սեպտեմբերի** ներառյալ:

2.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է **2024 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 12:00-ին**:

Սույն թվականի **սեպտեմբերի 06-ին** կասեցված նիստը շարունակվում է կասեցման պահից՝ սույն թվականի **սեպտեմբերի 10-ին ժամը 12:00-ին:**

3 Հանձնաժողովը արձանագրեց, որ.

3.1 «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի և «ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, **մասնակիցների** կողմից ներկայացված հայտերը ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4 Հանձնաժողովը որոշեց.

4.1 Ընտրված մասնակիցներ հայտարարել (ճանաչել) նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ՝

1-ին չափաբաժինի մասով **«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ-ին** պայմանագրի գինը՝ **1,540,000 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,**

2-րդ չափաբաժնի մասով **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին,** պայմանագրի գինը՝ **1,650,000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:**

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝	
Էմանուել Իվանյան	
անդամներ՝	
Անահիտ Թադևոսյան	
Սերգեյ Հարությունյան	
Վարդինե Իսահակյան	
Սոնա Կարապետյան	
քարտուղար՝	
Ալիսա Նիկոլայան	